

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր  
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

<i>Ծրագրի անվանումը</i>	Պետական գնումների կազմակերպման գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման հնարավորությունների մոնիտորինգ
<i>Դիմող կազմակերպության անվանումը</i>	<<Արժանապատիվ սերունդ>> հասարակական կազմակերպություն
<i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i>	Ժաննա Ղուլոյան, հեռ. 093759178, էլփոստ Janna.ghuloyan@gmail.com
<i>Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)</i>	Գեղարքունիքի մարզ
<i>Ծրագրի տևողությունը</i>	2 ամիս
<i>Ծրագրի հակիրճ նկարագիրը</i>	Հարցումների, մոնիտորինգի և վերլուծության միջոցով ուսումնասիրել և բացահայտել պետական գնումների ոլորտում առկա իրավիճակը, խնդիրները և կոռուպցիոն ռիսկերը
<i>ԻՀԱ-ից պահանջվող Գումարի չափը</i>	694000 /վեցը հարյուր իննսունչորսը հազար դրամ/
<i>Ներդրման գումարի չափը</i>	160000 /մեկ հարյուր վաթսուն հազար դրամ/
<i>Ծրագրի բյուջեն (նշել դրամով)</i>	854000 /ութը հարյուր հիսունչորսը հազար դրամ/
<i>Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)</i>	

## **Դիմող կազմակերպության նկարագրություն**

<<Արժանապատիվ սերունդ>> հասարակական կազմակերպությունը հիմնվել է 2002 թվականին:

Կազմակերպության հիմնական առաքելությունն է եղել կրթական, առողջապահական, մշակութային, համայնքային և այլ ծրագրեր իրականացնելու միջոցով նպաստել երեխաների, կանանց, սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների, ձեռներեցների և այլ խմբերի սոցիալ տնտեսական, կրթական, առողջապահական, մշակութային, իրավական խնդիրների բացահայտմանը և լուծմանը: Նշված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են տարբեր ծրագրեր: Կազմակերպությունը համագործակցել է հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների, համայնքների, միջազգային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ:

Իրականացված ծրագրերից կարելի է նշել ՀՀ Գեղարքունիքի մարզում մարդկային աղքատության լայնածավալ հետազոտություն / UNDP/, Տեղեկատվական աջակցություն լայն հասարակայնությանը կրթական ծրագիր /US Embassy, Democracy Commission Grant/, Համայնքային կարողությունների զարգացում /World Vision/, Տարածքային զարգացման սոցիալական ծրագրեր /DFID/, Իրավագիտակից քաղաքացի ծրագիրը /PH International/ և այլն:

Իրականացված ծրագրերի շրջանակներում կատարվել են ուսումնասիրություններ, հարցումներ, վերլուծություններ, անցկացվել են դասընթացներ: Ծրագրերին ներգրավվել են տարբեր մասնագետներ և փորձագետներ: Մասնավորապես Գավառի պետական համալսարանի դասախոսներ, դպրոցների ուսուցիչներ համայնքների ներկայացուցիչներ:

## **Ծրագրի նկարագրություն**

Հայաստանի Հանրապետությունում արդեն երկար ժամանակ գործում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքը որի նպատակն է կարգավորել պետական գնումների կազմակերպման գործընթացները: Օրենքը և դրանից բխող ընդունված օրենսդրական բազմաթիվ ակտերի գլխավոր նպատակներից է նվազեցնել պետական գնումների

համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը՝ ապահովելով գնումների թափանցիկությունը, մրցակցությունը և արդարությունը:

Չնայած այն հանգամանքին, որ պետական գնումների մասին օրենսդրությունը անընդհատ կատարելագործվում է այնուամենայնիվ ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք պարունակում են զգալի կոռուպցիոն ռիսկեր:

Պետության կարիքների համար ապրանքներ , ծառայություններ և աշխատանքներ գնող պետական կազմակերպությունների հաջող գործունեությունը պայմանավորված է նաև նրանով, թե որքանով են նրանք լավատեղյակ պետական գնումները կարգավորող կանոններին և ընթացակարգերին և որքան արդյունավետ են դրանք օգտագործում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պետական գնումներին վերաբերվող օրենսդրությունը բավականին ծավալուն է պարունակում է բազմաթիվ հասկացություններ, ընթացակարգեր և գործառույթներ, որոնք բարդ են և դժվար ընկալելի: Բացի այդ այն անընդհատ փոփոխվում է:

Այս խնդիրները առավել զգացնել է տալիս մարզերում գործող պետական կազմակերպություններում, որոնք իրենց գործունեության համար անհրաժեշտ գնումները պետք է կատարեն գնումների օրենսդրության համաձայն: Մասնավորապես դա վերաբերվում է մարզերի հեռավոր բնակավայրերում գտնվող հանրակրթական դպրոցներին և առողջապահական հաստատություններին: Նշված կազմակերպությունները շատ դեպքերում չունեն գնումների գործընթացների տիրապետող համապատասխան մասնագետներ, հիմնականում աղոտ պատկերացում ունեն գնումների վերաբերյալ ինչը զգալի չափով մեծացնում է ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:

### **Ծրագրի նպատակը՝**

Մոնիտորինգի միջոցով ուսումնասիրել ՀՀ Գեղարքունիքի մարզում /Գավառ, Մարտունի/ գործող կրթակական /դպրոցների/ և առողջապահական հաստատություններում /պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, ծննդատներ, հիվանդանոցներ/ պետական գնումների կազմակերպման գործընթացները

## **Ծրագրի խնդիրները՝**

1. Պարզել Գեղարքունիքի մարզի 22 պետական կազմակերպությունների գնումների գործընթացին մասնակիցների տեղեկատվության աստիճանը, առկա խնդիրները, խոչընդոտները և կոռուպցիոն ռիսկերը
2. Ուսումնասիրության արդյունքներով իրավասու մարմիններ ներկայացնել առաջարկություններ՝ առկա խնդիրները լուծելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

## **Ծրագրի նպատակներին հասնելու համար կկատարվեն հետևյալ քայլերը**

- = Կազմակերպության փորձագետի կողմից կպատրաստվեն հարցաթերթիկներ, որոնցում կընդգրկվեն գնումների գործընթացի կազմակերպմանը և անցկացմանը վերաբերվող տարբեր հարցեր
- = Կազմակերպության փորձագետի կողմից կընտրվեն բոլոր այն կազմակերպությունները, որոնցում նախատեսված է իրականացնել ուսումնասիրությունը: Նախատեսվում է ընդգրկել մարզի համայնքներում գործող կազմակերպություններին:
- = Շահառուներ կհանդիսանան 22 կազմակերպություն և այդ կազմակերպություններում գնումների գործընթացում ընդգրկված մասնակիցները:
- = Կանցկացվեն հարցումներ գնումների գործընթացներին մոտ 100 մասնակիցների
- = Արդյունքները կվերլուծվեն և կամփոփվեն փորձագետի կողմից
- = Ուսումնասիրության արդյունքում կպատրաստվի զեկույց, որը կներկայացվի բոլոր շահագրգիռ կազմակերպություններին և անձանց /այդ թվում հասարակական կազմակերպություններ, պետական մարմիններ

## **Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները՝**

- = Գնումների կազմակերպման գործընթացներին ծանոթ և տեղեկացված կազմակերպություններ և մասնակիցներ
- = Խնդիրներին տեղյակ իրավասու պետական մարմիններ և կազմակերպություններ
- = Խնդիրներին լուծում տվող մարմիններ
- = Կոռուպցիոն ռիսկերի նվազում

Ծրագրից ակնկալվող արդյունքները կնպաստեն մարզում գործող կազմակերպություններում գնումների գործընթացներում առկա խնդիրների վերհանմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազմանը:

**Ժամանակացույց**

Շաբաթ	Գործողություն
1-ին	Աշխատակազմի ձևավորում, անհրաժեշտ ապրանքների ձեռք բերում
2-րդ	Հարցաթերթի պատրաստում
3-րդ -7-րդ	Հարցումների անցկացում
8-րդ	Արդյունքների վերլուծում, ամփոփում և հաշվետվությունների պատրաստում

**Բյուջե / Հավելված Budget**

*(Խնդրում ենք ներկայացնել մանրամասն բյուջե՝ առանձին տողերով՝ ըստ դասակարգումների)*

Ծրագրի բյուջեն հետևյալն է

1. Աշխատակազմը ներառում է մեկ ծրագրի համակարգող՝ ամսական 90000 հազ.դրամ, 2 ամսվա համար 180000 դրամ և 1 փորձագետ, որի ընդհանուր աշխատավարձը 2 ամսում կկազմի 300000 դրամ:
2. Ճանապարհաձախարհ ներառում է այցելություններ մարզի 22 կազմակերպություններ և աշխատանքային այց Երևան: Նախատեսվում է 6 այցելություն մարզի տարածքում յուրաքանչյուր այցը 15000 դրամ և մեկ այցելություն Երևան 20000 դրամ: Բոլոր այցերը տաքսի ծառայության միջոցով: Ընդամենը 110000 դրամ:
3. Գրասենյակային պարագաները ներառում են Ա4 ֆորմատի թուղթ 4 տուփ յուրաքանչյուրը 2500 դրամ: Ընդամենը 10000 դրամ: Քարթիջի լիցքավորում ընդամենը 4000 դրամ: Ընդամենը գրասենյակային պարագաներ 14000 դրամ:
4. Այլ ուղղակի ծախսերը ներառում են տարածքի և տեխնիկայի վարձակալություն 2 ամսում 160000 դրամ կներդրվի կազմակերպության կողմից: Մեկ ամփոփիչ քննարկման ընթացքում սուրճի ընդմիջում 30000 դրամ:  
Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 854000 դրամ, որից 694000 դրամը պահանջվում է ԻՀԱ-ից, իսկ 160000 դրամը կազմակերպության ներդրումն է:

**Այլ տեղեկատվություն**

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել էք սույն ծրագիրը և ձեր դիմումի կարգավիճակը

Վերջին երեք տարիներին կազմակերպության կողմից իրականացված ծրագրերի ցանկ

#	Ծրագրի անվանումը	Ֆինանսավորող կազմակերպություն	Ծրագրի արժեքը	Ծրագրի ժամանակահատված
---	------------------	-------------------------------	---------------	-----------------------

				ատվածը
1.	Իրավագիտակից քաղաքացի	PH International	1.920.000	15.01.2014- 30.04.2014թ

<< Արժանապատիվ սերունդ>> ՀԿ նախագահ՝

Ժաննա Ղուլոյան